ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԹԻՎ 1 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 12-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «2012 թվականի դեկտեմբերի 2-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով լրացուցիչ ընտրության արդյունքներով թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 12-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործն ընդունել քննության։

2. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և 74-րդ հոդվածի 19-րդ մասի՝ գործի դատաքննությունն սկսել 2013թ. հունվարի 25-ին, ժամը 11.00-ին։

3. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի՝ գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Ֆ. Թոխյանին։

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն, ելնելով սահմանադրական դատարանի ծանրաբեռնվածությունից, գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով։

5. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի՝ նշված գործը քննելիս որպես պատասխանող կողմ ներգրավել ընտրությունների արդյունքների ամփոփման հիման վրա որոշում ընդունած պետական մարմնին՝ թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին։

6. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա սույն գործով որպես հարակից պատասխանող ներգրավել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին։

7. Դիմող և պատասխանող կողմերին, հարակից պատասխանողին՝ սույն գործով գրավոր բացատրությունները ՀՀ սահմանադրական դատարան ներկայացնել մինչև 2013թ. հունվարի 12-ը։

8. Պահանջել պատասխանող կողմից՝ 1-շաբաթյա ժամկետում ՀՀ սահմանադրական դատարան ներկայացնել թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. դեկտեմբերի 7-ի թիվ 12-Ա որոշման ընդունման համար հիմք ծառայած՝ թիվ 1 ընտրատարածքում ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի լրացուցիչ ընտրության քվեարկության արդյունքների արձանագրությունը, թիվ 1 ԸԸՀ-ի՝ 29.11.2012թ. թիվ 7-Ա, 07.12.2012թ. թիվ 9-Ա, 07.12.2012թ. թիվ 10-Ա և 07.12.2012թ. թիվ 11-Ա որոշումները և ՀՀ ԿԸՀ-ի՝ 01.12.2012թ. թիվ 327-Ա որոշումը։

9. Պահանջել հարակից պատասխանողից՝ 1-շաբաթյա ժամկետում ՀՀ սահմանադրական դատարան ներկայացնել դիմողի կողմից ՀՀ ԿԸՀ հասցեագրված դիմում-բողոքների քննարկման և դրանց արդյունքների վերաբերյալ պարզաբանումներ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18 դեկտեմբերի 2012 թվականի
ՍԴԱՈ-90